Ագրոլրատու

### ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ և ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ



*Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ հանրապետության հողագործներին, անասնապահներին, գյուղատնտեսության բնագավառի մասնագետներին, գիտնականներին, գյուղատնտեսական հումք վերամշակողներին և գործարարներին, ովքեր շարունակում են նախանձելի նվիրումով ու եռանդով բարիք արարել ու շենացնել հայրենի գյուղը:*

*Անցնող 2014 թվականը, չնայած բնակլիմայական անակնկալներին, գյուղացու համառ ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ, դարձավ նոր ձեռքբերումների, հաջողությունների ու առաջընթացի տարի:*

*Մենք լավ ենք գիտակցում, որ այսօր գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած խնդիրները բազմազան են և առանձնահատուկ հոգածության, ամենօրյա ուշադրության կարիք ունեն, ուստի, այսուհետ ևս՝ գյուղացու հոգսը թեթևացնելու նպատակով, շարունակվելու է պետական աջակցությունն ու օժանդակությունը:*

*Լիահույս եմ, որ գալիք տարում, Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության պայմաններում, նոր հեռանկարներ են բացվելու մեր երկրի գյուղատնտեսության զարգացման համար: Միության մեծ ու տարողունակ շուկան անսահմանափակ հնարավորություններ կարող է ստեղծել թարմ ու վերամշակված գյուղատնտեսական արտադրանքի շահավետ պայմաններով իրացման և մեր գյուղացիական տնտեսությունների համար կայուն եկամուտների ապահովման գործում:*

*Եվ այսօր, ձեր աշխատանքի նկատմամբ ունեցած մեծագույն հարգանքով ու երախտիքով, մաղթում եմ առողջություն, երջանկություն, լավատեսություն ու բարօրություն:*

*Թող Նոր Տարին մեր երկրի ու հայ ժողովրդի համար լինի խաղաղության, կայունության ու հզորացման, իսկ հողի մշակի համար՝ առատ բերք և բարիքի տարի:*

*Աստված մեզ պահապան:*

*Սերգո Կարապետյան*
*ՀՀ գյուղատնտեսության նախարար*



*ԱՍՈՒԼԻՍ*

## ՈԼՈՐՏԻ ՆՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

***ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ասուլիս էր հրավիրել՝ ներկայացնելու նախարարության 2014 թվականի գործունեության արդյունքներն ու առաջիկա խնդիրները:***

**Նախարարը նշեց, որ անցնող տարում գյուղատնտեսության ոլորտում գրանցվել են դրական տեղաշարժեր: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ընթացիկ օպերատիվ տվյալներով՝ 2014 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 920.7 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 6.5%-ով: Շարունակվել են դրական տեղաշարժերը հողային ռեսուրսների, մասնավորապես՝ վարելահողերի օգտագործման բնագավառում: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2014 թվականին կազմել է 74.2 %՝ նախորդ տարվա՝ 71%-ի դիմաց:**

↳3

*ԱՄՓՈՓՈՒՄ*

## ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՃ

***Վերջերս տեղի է ունեցել ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գրիշա Բաղիյանի մամուլի ասուլիսը: Ամփոփելով անասնաբուծության և ձկնաբուծության ոլորտում գյուղատնտեսական տարվա արդյունքները՝ նախարարի տեղակալը հայտնեց, որ 2014 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, արձանագրվել են բարձր ցուցանիշներ թե՛ անասնագլխաքանակի, և թե՛ անասնաբուծական մթերքների արտադրության և իրացման ծավալների ավելացման առումով:***

**«2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ, կարձանագրվի բոլոր տեսակի անասնագլխաքանակի աճ 2-5%-ով. տավարի գլխաքանակը կկազմի 694.5 հազար, ոչխարների և այծերի գլխաքանակը՝ 753.8 հազար, խոզերի գլխաքանակը՝ 145.0 հազար, թռչուններինը՝ 5 մլն», - նշել է նախարարի տեղակալը:**

**Նա նաև հավելել է, որ անասնագլխաքանակի աճի հետ միասին, կավելանան նաև անասնաբուծական մթերքների արտադրության ծավալները: Ընդ որում՝ մսի արտադրության համախառն ծավալները կավելանան 18.2 հազար տոննայով և կկազմեն 165.0 հազար տոննա, կաթի արտադրությունը կավելանա շուրջ 61.0 հազար տոննայով և կկազմի 718.0 հազար տոննա, իսկ ձվի արտադրությունը կավելանա 28.8 մլն հատով և կկազմի 644.0 մլն հատ:**

1֏ ԱՄՈՒԼԻՍ

# ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՃ



Ըստ Գ. Բաղիյանի՝ ոլորտի նման տպավորիչ արդյունքներն իրականացվող ծրագրերի և բնագավառի աշխատողների հետևողական աշխատանքի արդյունք են: Նա հատկապես առանձնացրել է 2007 թվականից գործող «Տավարաբուծության զարգացման ծրագիրը», որի շրջանակում մինչ օրս ներկրվել են 1811 գլուխ բարձր մթերատու տոհմային շվից, սիմենթալ և հոլշտին ցեղերի երինջներ, որոնք պարաժամկետ վճարման պայմանով, հատկացվել են 65 տնտեսավարող սուբյեկտների: Այս ծրագրի շնորհիվ Հայաստանում ստեղծվել են նոր տոհմային տնտեսություններ, որտեղ կենդանիները ցուցաբերում են բարձր մթերատվություն: Ներկրված կենդանիներից ստացվել են բարձր մթերատու հատկանիշներով օժտված տեղի բնակլիմայական պայմաններին լավ հարմարվող և բարձրարժեք տոհմային հորթեր: Դրանցից արդեն 1000 գլուխ վաճառվել են հանրապետության գյուղացիական տնտեսություններին: «Որոշ ընկերություններ այս գործում մեծ հաջողությունների են հասել և իրենց տնտեսություններում բուծված տոհմային երինջների խմբաքանակից շուրջ 200 գլուխ վաճառել են Վրաստանի Հանրապետությանը, ինչը աննախադեպ երևույթ է մեր հանրապետության անասնաբուծության ողջ պատմության ընթացքում: Ներկրված կենդանիներից տարեկան ստացվում է 6-8 հազար կգ կաթ, ինչը 3-4 անգամ գերազանցում է մեր հանրապետության միջին ցուցանիշը, իսկ առանձին կովերի կաթնատվությունը կազմում է 10-11 հազար կգ»,- ընդգծել է Գրիշա Բաղիյանը:

Նրա խոսքով՝ գյուղատնտեսության նախարարությունը վերջին տարիներին անասնաբուծության ոլորտում ձեռնամուխ է եղել արմատական բարեփոխումների իրականացմանը, ինչը հնարավորություն կընձեռի կենդանիների պահվածքի ավանդական պայմաններն աստիճանաբար փոխարինել ժամանակակից տեխնոլոգիաներով, իսկ ցածր մթերատու կենդանիների փոխարեն բուծել մեր երկրի բնակլիմայական պայմաններին առավել հարմարված համաշխարհային լավագույն դասական ցեղերի բարձր մթերատու կենդանիներ: Այդ նպատակով եվրոպական երկրներից ներկրվում են բարձր մթերատվությամբ և ամուր համակազմվածքով տավարի կաթնատու և կաթնամսատու տոհմային երինջներ:

Դրան զուգահեռ, երեք մարզերում կառուցվում են արդի տեխնոլոգիաներով հագեցած ժամանակակից խոզաբուծական համալիրներ: 2014 թվականին եվրոպական երկրներից ներմուծվել են ավելի քան 200 գլուխ լանդրաս, պետրեն և դյուրոկ մսատու ցեղերի տոհմային կենդանիներ: Եվս 300 գլուխ տոհմային խոզեր կներմուծվեն 2015 թվականի առաջին կիսամյակում:

Անդրադառնալով ձկնաբուծության ոլորտին՝ նախարարի առաջին տեղակալը նշել է, որ 2014 թվականին այս ոլորտում շարունակվել են նախորդ տարվա ձեռքբերումները: 2014 թվականի արդյունքներով՝ հանրապետությունում արտադրվել է շուրջ 14 հազար տոննա ապրանքային ձուկ, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է շուրջ 30.0%-ով: Կտրուկ ավելացել է նաև հանրապետությունից թարմ, սառեցված և վերամշակված ձկնամթերքի արտահանման ծավալը՝ կազմելով գրեթե 2.2 հազար տոննա, ինչը 400 տոննայով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

ԱՄՓՈՓՈՒՄ

# ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ



Գյուղատնտեսությունը յուրաքանչյուր պետության առանցքային ճյուղերից է, և պետության հաջողությունները մեծապես պայմանավորվում են այդ ոլորտի հաջողություններով: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը, որն իրականացվում է «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից, մեկնարկել է 2011թ. և կավարտվի 2016թ.: Ծրագրի նպատակները ՀՀ-ում անասնապահության շարունակական զարգացման ապահովումն է, ֆերմերային տնտեսություններում գիտական հաստատությունների կողմից մշակված նորարարական առաջարկությունների փորձարկումն ու ցուցադրումը, դրամաշնորհների տրամադրման միջոցով ֆինանսական աջակցությունն այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնց ջանքերն ուղղված են նոր արտադրատեսակների, տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսական գործարարության շուկայավարման ու կառավարման կատարելագործմանը:

Վերջին տարիներին ՀՀ կառավարության գերակա խնդիրների շարքում առանձնանում է գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման շարունակականության ապահովումն ու կայացումը: Գյուղատնտեսության ոլորտում արտադրողականության բարձրացման, ընդլայնված վերարտադրության ապահովման, ոլորտի ինտենսիվության առումով, գյուղացիական տնտեսությունների համատեղ գործունեությունն օրինաչափ է և այլընտրանք չունի. այդ պատճառով էլ ծրագիրը գտնվում է կառավարության, գյուղատնտեսության նախարարության ու հատկապես նախարարի ուշադրության կենտրոնում: Ծրագրում առանձնահատուկ ուշադրություն առարկա են նաև բնապահպանական խնդիրները: Այն լիովին համապատասխանում է վերը նշված գերակայությանը՝ գործնականում իրականացվում է համայնքներում ստեղծվող գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվների միջոցով: Աշխատանքի արդյունավետ պլանավորման ու ֆինանսական ռեսուրսների խնայողության շնորհիվ, ՀՀ 6 մարզում՝ նախատեսված 55-ի փոխարեն, ծրագիրն այժմ իրականացվում է 87 համայնքում: 2011-2014 թթ. ընթացքում կառուցվել է կենդանիներին խմելու ջրով ապահովման 158 կմ ջրագիծ, տեղադրվել է 204 խմոց, որի շնորհիվ օգտագործելի է դարձել շուրջ 101 հազար հա հեռագնա արոտ, բարելավվել է դեպի արոտներ տանող 49 300 քմ ճանապարհ: Տասներկու համայնքում կառուցվել է 8050 քմ փարախ, հովիվների համար 12 կացարան: Յոթանասունմեկ համայնքի կոոպերատիվի տրամադրվել է 481 միավոր գյուղտեխնիկա, որից տրակտոր՝ 122: Միջնաժամկետ հատվածում գրանցվել է 15% կաթնատվության ու 12% մսատվության աճ: Ծրագրի շրջանակներում ներդրվել է 148 «Տեխնոլոգիաների գնահատման» ծրագիր, կառուցվել է անասնաբուժական սպասարկման 2 կենտրոն, իսկ 3-րդում շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են: Մրցութային դրամաշնորհ է տրամադրվել 53 նախագծի, որոնց ֆինանսական ընդհանուր աջակցությունը կազմել է 406.4 մլն դրամ: Մեր աշխատանքի արդյունավետությանը նպաստում են նաև անհրաժեշտ ուսուցողական դասընթացները, որոնց շնորհիվ ֆերմերները ստանում են մասնագիտական գիտելիքներ ու տեղեկություններ գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ:

Այս ամենը, իհարկե, քիչ չէ, սակայն առավել կարևորն այն գիտակցությունն է, որ աշխատանքները նպաստում է գյուղական շրջանների բնակչության զբաղվածության աճին, բարձրանում է նրանց կենսամակարդակը, լավանում ֆինանսական վիճակը: Այսպիսի գիտակցությամբ ու տրամադրությամբ ենք մենք ավարտում 2014թվականը:

Սիրելի բարեկամներ, գործընկերներ, հայրենակիցներ, բոլոր այն ծրագրերն ու աշխատանքները, որոնք մենք միասին իրականացրել ենք անցնող տարում, այսուհետ ևս հաջողությամբ կշարունակվեն: Վերջին տարիներին գյուղատնտեսության ոլորտում արձանագրված անառարկելի հաջողություններն ուրախալի են մեզ համար և համոզված եմ, որ այդպես կլինի նաև գալիք տարում: Նոր տարին երազելու, հուսալու, հավատալու ժամանակ է, երբ ոչինչ անհնարին չի թվում: Թող այն լինի հաջողության, համերաշխության ու համագործակցության տարի մեր հայրենիքի ու մեր ընտանիքների համար: Շնորհավոր Ամանոր ու Սուրբ Ծնունդ:

Գագիկ Խաչատրյան
«ԳԾԻԳ »ՊՀ տնօրեն

# ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ



«Մենք շարունակելու ենք աշխատել գյուղատնտեսության զարգացման ոլորտում՝ նպաստելով սահմանամերձ համայնքներում աղքատության կրճատմանը և տնտեսական նոր հնարավորությունների ստեղծմանը՝ հատկապես փոքր ֆերմերների համար»

Օքսֆամն արդեն 21 տարի է, ինչ աշխատում է Հայաստանում՝ իրականացնելով բազմաբնույթ զարգացման ծրագրեր Հայաստանի հեռավոր սահմանամերձ համայնքներում: Մեր կազմակերպությունն առաջնորդվում է «Կառուցենք ապագա՝ առանց աղքատության» կարգախոսով և հաշվի առնելով գյուղատնտեսության կարևոր դերը երկրի զարգացման և աղքատության կրճատման գործում՝ «գյուղատնտեսական ծրագրերը մեր առաջնահերթ ուղղություններից են»: ՕՔՍՖԱՄ-ն, իր «Տնտեսական արդարություն և պարենային անվտանգություն» ծրագրի շրջանակներում, աջակցում է Տավուշի և Վայոց ձորի գյուղական աղքատ համայնքներին:

Ծրագրի շրջանակներում արդեն հաջողությամբ հիմնադրվել և ակտիվորեն գործում են 18 գյուղատնտեսական կոոպերատիվներ՝ Տավուշի և Վայոց ձորի մարզերի 18 համայնքներում, որոնց անդամների 60 և ղեկավար կազմի 80 %-ը կանայք են: Հիմնադրել են 6 կանանց գյուղատնտեսական կոոպերատիվներ: Ընդհանուր առմամբ, Օքսֆամի 3000 շահառու մանր ֆերմերային տնտեսություններ արձանագրել են եկամուտների ընդհուպ մինչև 30 % աճ: Ավելին, Օքսֆամը հիմնադրել է 18 համայնքային ջերմոցներ Տավուշի և Վայոց ձորի մարզերում՝ սոցիալական ձեռնարկության տեսքով, կառուցվել են գյուղատնտեսական թարմ արտադրանքի համար նախատեսված 8 սառնարանային պահեստներ /մթերման կենտրոններ/: Ակնաղբյուր համայնքում հիմնադրվել է սոցիալական ձեռնարկության նորարարական մոդել՝ ջերմոցային 2 տնտեսությունների և ֆերմերային դպրոցի տեսքով: Վերակառուցվել և գործարկվել են մրգի և հատապտուղների վերամշակման արտադրամասեր Տավուշի մարզի Այրում և Սևքար համայնքներում: «Կանայք աշխարհում արտադրում են գյուղմթերքների 2/3-ը, սակայն կանանց միայն 20-30 փոկոսն է համարվում հողի սեփականատեր: Հայաստանում աշխատուժի 40 տոկոսը ներգրավված են գյուղատնտեսության մեջ, որի 50 տոկոսը կանայք են: Ավելին, գյուղմթերքների 50-60 տոկոսն արտադրվում է կանանց կողմից»,- նշում է Մարգարիտա Հակոբյանը:

ՕՔՍՖԱՄԸ կարևորում է կանանց դերը երկրի զարգացման գործում, հատկապես՝ գյուղատնտեսության ոլորտում: Սկսած 2012 թվականից, Oxfam-ը կազմակերպում է «Գյուղմթերքների արտադրության ոլորտի կին հերոսե ամենամյա մրցույթը, որը խթան է հանդիսանում կին առաջնորդների և սննդամթերք արտադրողների համար՝ կարևորելով կանանց առանցքային դերը՝ որպես մթերք արտադրողներ:

Գալիք տարում ևս մենք շարունակելու ենք աշխատել գյուղատնտեսության զարգացման ոլորտում՝ նպաստելով սահմանամերձ համայնքներում աղքատության կրճատմանը և տնտեսական նոր հնարավորությունների ստեղծմանը: Կանայք կրկին կլինեն մեր ծրագրերի կենտրոնում: Համոզված ենք, որ հավատը և նվիրումը մեր գործին, կառուցելու ավելի արդար աշխարհ՝ առանց աղքատության և անհավասարության:

Մարգարիտա Հակոբյան
*Օքսֆամի հայաստանյան գրասենյակի տնօրեն*

Ագրոլրատու
Դեկտեմբեր 16 - 26, 2014 թ.
թիվ 33 (2055)

1 ԱՄՍՈՒԼԻՍ

# ՈԼՈՐՏԻ ՆՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների ջանքերի և իրականացված մի շարք պետական աջակցության ծրագրերի արդյունքում, գյուղատնտեսության արտադրության ծավալների ավելացումը հանգեցրել է ՀՆԱ-ի մեջ գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշռի որոշակի ավելացմանը:

2014 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 332.7 հազար հա, նախորդ տարվա՝ 318.1 հազար հա-ի դիմաց: Ցանքատարածություններն ավելացել են 14.6 հազար հա-ով: Նախադրյալներ են ստեղծվել՝ նշված միտումը առաջիկա տարիներին շարունակելու ուղղությամբ:

2014 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 558.05 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 6.3 %-ով:

Ըստ օպերատիվ տվյալների՝ բուսաբուծական մթերքների արտադրության ծավալները բնութագրող տվյալները ներկայացված են են աղյուսակ 1-ում:

2014 թվականին, ըստ օպերատիվ տվյալների, գրանցվել է գրեթե բոլոր (բացառությամբ՝ պտղի, որը հետևանք էր աննախադեպ ցրտահարության պատճառած կորուստների, հատկապես՝ ծիրանի նախորդ տարվա 88,9 հազ տոննայի դիմաց, այս տարի ստացվել է 14,9 հազ տոննա) մշակաբույսերի համախառն արտադրանքի աճ: Առավել մեծ աճ է ապահովվել հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի, մասնավորապես՝ ցորենի արտադրության բնագավառում:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի բերքատվությունը, ըստ օպերատիվ տվյալների՝ կազմել է 31.4 ց/հա, նախորդ տարվա՝ 30.8 ց/հա-ի դիմաց: Ինչ վերաբերում է ցորենին, ապա բերքատվությունը կազմել է 32 ց/հա, նախորդ տարվա՝ 31.3 ց/հա-ի դիմաց:

Նշվածի հետ մեկտեղ, բարձրացել է ցորենի ինքնաբավության մակարդակը: 2012 թ.՝ 32.9 %, 2013թ.՝ 46.8%, իսկ 2014թ. գնահատվում է շուրջ 51 %: Ներկայացված տվյալները վկայում են վերջին տարիներին հացահատիկային տնտեսության ինտենսիվ զարգացման մասին:

Ասուլիսի ընթացքում նախարարը կարևորեց այն փաստը, որ 2013 թվականին անասնաբուծության ոլորտում կատարված դրական տեղաշարժերը նախադրյալներ ստեղծեցին՝ 2014 թվականի անցած ամիսներին, նախորդ տարվա համեմատությամբ, արձանագրելու բարձր ցուցանիշներ թե՛ անասնագլխաքանակի, և թե՛ անասնաբուծական մթերքների արտադրության և իրացման ծավալների ավելացման առումով:

2014 թվականի տասն ամիսների ընթացքում արձանագրվել է կենդանական ծագման մթերքների արտադրության նկատելի աճ: 2014 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ, հանրապետությունում արտադրվել է շուրջ 92 հազար տոննա միս, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 9 հազար տոննայով կամ 11.2 տոկոսով: Կաթի արտադրությունը կազմել է 646 հազար տոննա, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 39 հազար տոննայով, իսկ ձվի արտադրությունը կազմել է շուրջ 580 մլն, որը նախորդ տարվա ցուցանիշից ավել է 19 մլն-ով կամ 11 տոկոսով:

2014 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին անասնապահության համախառն արտադրանքը կազմել է 284 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 7 %-ով:

Ըստ օպերատիվ տվյալների, անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալների տվյալները բերված են աղյուսակ 2-ում:

Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք պետական ծրագրեր: Մասնավորապես՝ «Տավարաբուծության զարգացման ծրագիրը»:

Զգալի առաջընթաց է նկատվում ոչխարաբուծության ոլորտում: Ոչխարների արտահանումը լուրջ խթան է ոլորտի զարգացման համար, և այդ նպատակով նախարարությունը շարունակում է հետևողական աշխատանքները՝ ոչխարների արտահանման ծավալներն ավելացնելու և ոչխարների մորթի համար նախատեսված ժամանակակից սպանդանոցները շահագործելու ուղղությամբ: 2014 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ, արտահանվել է 131 հազար գլուխ մանր եղջերավոր՝ 2013թ. նույն ժամանակահատվածի 107 հազար գլխի դիմաց:

*Աղյուսակ 1*

| Մթերքները | 2013թ. փաստացի | 2014թ. օպերատիվ կանխատեսում | 2014 թվականը 2013 թվականի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Հացահատիկ և հատիկաընդեղենային մշակաբույսեր | 548.8 | 591 | 107.8 |
| այդ թվում՝ ցորեն | 311.6 | 340 | 109.2 |
| Կարտոֆիլ | 660.5 | 690 | 104.7 |
| Բանջարեղեն | 876.0 | 947 | 108.1 |
| Բոստան | 208.1 | 245 | 117.8 |
| Պտուղ և հատապտուղ | 338.1 | 296 | 87.6 |
| Խաղող | 240.8 | 258 | 107.1 |
| Կուտակվել է խոտ | 1497.5 | 1559 | 104.1 |

Հանրապետությունում անասնաբուծության զարգացմանը նպաստել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագիրը: Ծրագրի նպատակն է՝ աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներին՝ հեռագնա արոտների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեգրադացված արոտների վերականգնման, ինչպես նաև կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման միջոցով: Համայնքներում ստեղծելով արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներ՝ խորհրդատվական համակարգի միջոցով աջակցություն կցուցաբերվի նորարարական տեխնոլոգիաների ներդրմանը, անասնաբուժական և տոհմային աշխատանքների բարելավմանը:

Ծրագրի իրականացման ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Արդյունավետ պլանավորման և ֆինանսական ռեսուրսների տնտեսման շնորհիվ, ծրագիրն իրականացվել է նախատեսված վեց մարզի (Արագածոտն, Շիրակ, Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 55 համայնքի փոխարեն՝ 87 համայնքում, 6 մարզի 90 համայնքում հիմնադրվել են «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ և «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, իսկ աշխատանքներն իրականացվում են 87 համայնքում, 6 մարզի 68 գյուղական համայնքի արոտներում կառուցվել են՝ 158 կմ ջրարբիացման (կենդանիներին խմելու ջրով ապահովման) համակարգեր, տեղադրվել է 204 խմոց, որով ջրարբիացվել է շուրջ 101 հազ. հա արոտ, բարելավվել է դեպի արոտներ տանող շուրջ 49.3 հազ. $մ^2$ ճանապարհ, 12 համայնքի արոտներում կառուցվել է շուրջ 8.1 հազ. $մ^2$ փարախ և 12 կացարան՝ հովիվների համար: Վեց մարզի 71 գյուղական համայնքում ստեղծված կոոպերատիվներին տրամադրվել է 481 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից՝ 122 միավոր տրակտոր և 359 միավոր՝ այլ գյուղգործիքներ: Ծրագրի իրականացման արդյունքում գրանցվել է շուրջ 15 % կաթնատվության աճ և շուրջ 12% քաշաճ:

Ընդհանուր առմամբ, ըստ օպերատիվ տվյալների, հանրապետությունում 2014 թվականին կովերի կաթնատվության աճը գնահատվում է շուրջ 106 կգ, մեկ կովի կաթնատվությունը կանխատեսվում է հասցնել 2160 կգ-ի՝ նախորդ տարվա 2054 կգ-ի դիմաց:

Ըստ նախարարի՝ լուրջ ձեռքբերումներ են արձանագրվել նաև վերամշակման ոլորտում: Ընթացիկ տարվա դեկտեմբերի 19-ի դրությամբ, հանրապետության շուրջ 50 վերամշակող խոշոր ընկերություններ մթերել են, ընդհանուր առմամբ, 230 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող, այդ թվում՝ 34 հազար տոննա բանջարեղեն (որից՝ 23 հազար տոննա լոլիկ), 14 հազար տոննա պտուղ և 184 հազար տոննա խաղող, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 35 մլրդ դրամ: Ընդ որում, նախորդ տարվա համեմատությամբ, այս տարի մթերման ծավալն ավելացել է 8.2 հազար տոննայով (3.6 %), իսկ մթերման գները՝ 4-11 %-ով:

Հանրապետությունում, գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման գործընթացը խթանելու նպատակով, մշակվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կարգավորելու է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման, անդամակցության, գործունեության իրականացման, կառավարման և այլ հարաբերություններ: Նախագիծը միջազգային փորձաքննության արդյունքում լրամշակվել է և ներկայումս քննարկվում է շահագրգիռ մարմինների հետ:

Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության մակարդակը բարձրացնելու նպատակով, նախարարության նախաձեռնությամբ, բելառուսական ընկերությունների հետ բանակցությունների արդյունքում, 2013-2014 թվականներին ներկրվել և ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով ուղղակի վաճառքի և լիզինգային եղանակով, շուկայականից զգալի ցածր գներով, տնտեսավարող սուբյեկտներին է տրամադրվել 288 «ՄՏԶ 82.1» մակնիշի տրակտորներ, ինչպես նաև 130 միավոր գյուղատնտեսական տարբեր գործիքներ:

Նախարարը նշեց, որ գյուղատնտեսության ոլորտում ձեռքբերումների և իրականացված աշխատանքների հետ մեկտեղ, առավել շատ են խնդիրները: Մասնավորապես, 2015 թվականին քաղաքականությունն ուղղվելու է հետևյալ առաջնահերթ խնդիրների լուծմանը.

Առանձնակի կարևորվելու է գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների, մասնավորապես՝ հողային ռեսուրսների նպատակային և արդյունավետ օգտագործումը, ցանքատարածությունների ավելացումը: Առաջնահերթ խնդիր է մնում երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը: Առաջիկա խնդիրների մեջ առանձնանում է տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում կոոպերացիայի, տնտեսավարողների համատեղ գործունեությունը խթանելու մեխանիզմների ներդրման միջոցով՝ արտադրության արդյունավետության բարձրացումը: Առաջնահերթ խնդիրներից է լինելու գյուղատնտեսական մշակաբույսերի՝ հատկապես հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմնաբուծության համակարգի զարգացումը, վերջինիս արդյունքում՝ բարձրորակ սերմերով հանրապետության ապահովվածության մակարդակի բարձրացումը: Առաջնահերթ է համարվում անասնաբուծության տոհմային գործի կազմակերպումը, մասնավորապես, գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավումը, արհեստական սերմնավորման գործընթացում արդյունավետ մեխանիզմների և տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև անասնաբուժական համակարգի կատարելագործումը: Գյուղատնտեսությունում տնտեսավարողների կայունության ապահովման նպատակով, ընդլայնված ծավալներով կշարունակվի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Կշարունակվեն մատչելի պայմաններով գյուղատնտեսության կարևորագույն ռեսուրսների մատակարարման ծրագրերը, մասնավորապես՝ դիզելային վառելանյութի, հանքային պարարտանյութերի:

*Աղյուսակ 2*

| | 2013թ. փաստացի | 2014թ. օպերատիվ, կանխատեսում | 2014 թվականը 2013 թվականի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Միս (կենդանի քաշով), հազ. Տոննա | 146.8 | 165 | 112.4 |
| Կաթ, հազ. տոննա | 657 | 718 | 109.3 |
| Ձու, մլն հատ | 615.2 | 644 | 104.7 |
| Խոշոր եղջ. կենդանիներ, հազ գլուխ | 677,6 | 691 | 102,0 |
| որից՝ կովեր, հազ. գլուխ | 309,6 | 316 | 102,2 |
| Մանր եղջ.կենդանիներ, հազ. գլուխ | 717,6 | 792 | 110,4 |
| Խոզեր, հազ. գլուխ | 139,8 | 141 | 101,0 |

Լուրջ խնդիրներից է նաև Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերի խնայողաբար օգտագործումը, որին կնպաստի ձկնաբուծությունում կիսափակ տեխնոլոգիայի ներդրումը:

Կարևորվում է նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման համար նախադրյալների ստեղծումը և քայլերի ձեռնարկումը:

Բնական աղետների, մասնավորապես կարկտահարության վնասների բացառման համար հրատապ է համարվում կարկտապաշտպան ցանցաշերտերի կիրառման տեխնոլոգիաների ներդրումը: Երկրի պարենային հաշվեկշռի բարելավման, սպառողների առողջության պահպանման, բուսաբուծական և անասնապահական ծագման արտադրատեսակների մրցունակության բարձրացման առումով, շարունակվելու է սննդամթերքի անվտանգության համակարգի բարելավումը, մասնավորապես՝ օրենսդրական հիմքերի կատարելագործումը, տեխնիկական բազայի ամրապնդումն ու կադրերի ուսուցումը:

Առաջնահերթ են նաև գյուղատնտեսության մեքենայական հավաքակազմի համալրման խնդիրները, որոնց լուծմանը կուղղվեն գյուղատնտեսությունը տեխնիկական միջոցներով ապահովելու տարբեր մատչելի մեխանիզմներ: Առանձնակի ուշադրություն կդարձվի հացահատիկահավաք կոմբայնների մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրմանը:

Ասուլիսի ավարտին՝ նախարարը շնորհավորեց բոլորի Նոր Տարին և Սուրբ Ծնունդը, մաղթեց քաջառողջություն, երջանկություն և հաջողություն, իսկ հայ գյուղացուն՝ բերքառատ տարի, հավատ և համբերություն:

*ՀՀ ԳՆ հասարակայնության հետ կապերի բաժին*

# Ամանորին ընդառաջ

Ագրարային ոլորտի հարգարժան հայրենակիցներ, շնորհավորում եմ Ձեզ Անանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, մաղթում հաջողություններ, առողջություն և անսպառ հնարավորություններ:

Այսօր Ձեզ է վստահված մարդկության կենսագոյության և անվտանգ սննդով ապահովման ամենապատասխանատու պարտականությունը, որը դարերով իրականացվել է մշտապես հոգաշատ Ձեր նման նվիրյալների կողմից և այժմ էլ այն անտրտունջ ձևով շարունակում եք Դուք: Երկրի վրա ամենաթանկ ռեսուրսը մարդն է, իսկ հիմնական խնդիրը՝ նրանց անհրաժեշտ քանակով և անվտանգ սննդով ապահովումը, ինչում մեծ են Ձեր ջանքերն ու ներդրումը:

Աշխարհում տեղի ունեցող տեղաշարժերը, բնության քմահաճույթյունները փորձում են իրենց կնիքը թողնել ամենօրյա աշխատանքի վրա, սակայն աներեր, հպարտ ու նոր մոտեցումներով պետք է դիմագրավել ամեն մի անակնկալ: Դուք մեր հայրենիքի ամենալավ հայրենասերներն եք, ազգային ավանդույթների կրողը, պետական սահմանների մշտարթուն պահապանը, հայ զինվորի առաջին ոգեշնչողն ու ուղեկիցը, բոլոր հարցերի քննարկման ընթացքում լավագույն ընդդիմախոսը:

Ձեր ծանր, դժվարին, քրտնաջան, սակայն պատվաբեր ավանդի հանդեպ մեր բոլորի խոնարհումը բերելով՝ կրկնակի անգամ շնորհավորում եմ Ձեզ, մաղթում անկոտրում կորով, անսպառ եռանդ, աշխատասիրություն, մեծ նվիրում, անամպ երկիք և բերքառատ դաշտեր:

***Հ.Ս. Ջավադյան***
***ՀԱԱՀ Ագրոբիզնես և շուկայաբանության ֆակուլտետ***

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

# Ծրագրերն իրականություն են դարձել

Գեղարքունիքի մարզի Դրախտիկ համայնքի բնակլիմայական պայմանները նպաստում են անասնաբուծության զարգացմանը, վերջինիս համար կան բավարար չափով արոտավայրեր: Գյուղում առկա են անասնաբուծական երեք խոշոր ֆերմերային տնտեսություններ: «Այսօրվա դրությամբ, գյուղում կաթի վերամշակման և սպանդանոցի կառուցման անհրաժեշտություն կա: Գյուղացին պետք է իմանա, որ կաթի և մսի իրացման խնդիր չի ունենալու: Պետք է պայմաններ ստեղծվեն, որպեսզի անասնապահական տնտեսություններն ավելի զարգանան, ավելացվի գլխաքանակը», – ասում է գյուղապետ Վալենտին Պետրոսյանը: Դրախտիկում առկա է 1570 գլուխ խոշոր (որից 900՝ կով) և 900 գլուխ մանր եղջերավոր անասուն, 110 խոզ: Գյուղի համար ավանդական ճյուղ է նաև մեղվաբուծությունը: Դրախտիկին բնորոշ է նաև հողագործությունը. ընթացիկ տարում 11 հա հողատարածք դրվել է հացահատիկային, 4,5 հա՝ բանջարանոցային մշակաբույսերի ցանքի տակ, իսկ 32 հա-ի վրա կատարվել է կարտոֆիլի տունկ:

Անջրդի հողատարածքների բերքատվությունը պայմանավորված է տեղումներով: «Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրը՝ գազաֆիկացումն է. գազատարը հասցվել է գյուղ, հետագա աշխատանքները հավանաբար կշարունակվեն գարնանը (առայժմ գազաֆիկացվել է մեկ թաղամաս): Ունենք նաև խմելու ջրի խնդիր, նոր ջրատարի կառուցման անհրաժեշտություն կա: Գյուղի դպրոցը ևս ենթակա է հիմնանորոգման», – ասում է գյուղապետը: Ամփոփելով տարին՝ Վալենտին Պետրոսյանը նշեց, որ իրականություն են դարձել շատ կարևոր ծրագրեր. երեխաների համար կառուցվել է խաղահրապարակ, նորոգվել է գյուղամիջյան ճանապարհը, երիտասարդության զբաղվածության խնդրի կարգավորման նպատակով, կառուցվում է համայնքային կենտրոն: «Գյուղում ավելանում է նորաստեղծ ընտանիքների, հետևաբար և՝ երեխաների թվաքանակը: Գարնանից կսկսվեն նախակրթարանի կառուցման աշխատանքները», – նշում է պրն. Պետրոսյանը:

Գյուղն ունի 1060 բնակիչ, մշտական բացակայողներ չկան: Ի դեպ, Դրախտիկը վերաբնակեցված է Ադրբեջանից բռնագաղթվածներով և Արծվաշենից տեղահանվածներով: Արվում է հնարավորը, որպեսզի նրանք ամուր կանգնեն մայր հողի վրա և իրենց հայրենանվեր գործունեությամբ նպաստեն Դրախտիկի շենացմանն ու բարգավաճմանը:

***Նելլի Սահակյան***

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

# Արոտների կայուն կառավարման նոր ձեռնարկի ներկայացում

Վերջերս կայացավ «Հայաստանում արոտների կայուն կառավարման ծրագրերի մշակման և իրականացման նոր ուղեցույցի ներկայացում՝ տարածքային ինքնակառավարման մարմիններին (ՏԻՄ) և մարզային կառույցներին» թեմայով աշխատաժողովը, որին ներկա էին Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչներ, Սյունիքի և Տավուշի մարզերի շուրջ 50 գյուղական համայնքների ՏԻՄ-երի ներկայացուցիչներ, «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) ՀԿ և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) ներկայացուցիչները:

Աշխատաժողովը կազմակերպվել էր «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ կողմից իրականացվող՝ «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Կենսաբազմազանության կայուն կառավարումը Հարավային Կովկասում» ծրագրերի շրջանակներում: ՌԶԳ ՀԿ-ն և ԳՄՀԸ-ն 2013 թվականից ի վեր համագործակցում են՝ նպատակ ունենալով մշակել և փորձարկել ՀՀ համայնքներում արոտների կառավարման բարելավմանն ուղղված մոդել, ինչպես նաև աջակցել ՀՀ Կառավարությանը՝ բարելավելու արոտների կառավարման պլանավորումը և իրականացման եղանակները գյուղական համայնքներում:

Աշխատաժողովի նպատակն էր՝ հանրությանը ներկայացնել և քննարկել ԳՄՀԸ-ի և ՌԶԳ ՀԿ-ի համատեղ ջանքերով Սիսիանի տարածաշրջանի 24 գյուղական համայնքներում իրականացվող փորձնական ծրագրի՝ արոտների կառավարման նոր մոդելի փորձարկման արդյունքները:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեց Հայաստանում արոտների կայուն կառավարման ծրագրերի մշակման և իրականացման նոր ուղեցույցը, ինչպես նաև ներկայացվեց և քննարկվեց Սիսիանի տարածաշրջանի ընտրված համայնքներում արոտների մշտադիտարկման նոր մոդելի փորձարկման արդյունքները, աշխատանքների իրականացման ընթացքում հանդիպած խոչընդոտները: Աշխատաժողովի մասնակիցները քննարկեցին արոտների կայուն կառավարման գործընթացի ներդրման և շահագործման ընթացքում գրանցված դրական տեղաշարժերը և ծագած խոչընդոտները, ինչպես նաև հնչեցրին բազմաթիվ առաջարկներ՝ արոտների կայուն կառավարման գործընթացը բարելավելու ուղղությամբ:

Փորձի փոխանակման նպատակով, աշխատաժողովին ներկա էին նաև ՌԶԳ ՀԿ կողմից իրականացվող «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ և արոտավայրերի կառավարում Տավուշի մարզում (Հայաստանի հյուսիս)» ծրագրի թիրախային 7 համայնքների ՏԻՄ-երի ներկայացուցիչները: Ծրագիրը ֆինանսավորում է Ավստրիական Զարգացման և Համագործակցության ծրագրային միավոր Ավստրիայի Զարգացման Գործակալությունը:

***«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ***

ԿՐԹԱԿԱՆ

# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

**Հայաստանի ազգային ագրարային համալսարանում դեկտեմբերի 15-ին ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ԱՄՆ Վիրջինիայի պոլիտեխնիկական ինստիտուտ /նահանգային համալսարանի (Վիրջինիա Թեք) և «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» (ԱՀԿՄԿ) հիմնադրամի միջև:**

Հուշագիրը վերաբերում է ակադեմիական, կադրային և մշակութային փոխանակումը խթանելու նպատակով գործակցության և բարեկամության կապեր ստեղծելուն և զարգացնելուն: Հուշագիրը ստորագրեցին ՀԱԱՀ-ի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Յուրի Մարմարյանը, Վիրջինիա Թեք համալսարանի միջազգային հետազոտությունների, կրթության և զարգացման գրասենյակի «ԻննովԵՅԹ» («Նորարարություն գյուղատնտեսական կրթության և վերապատրաստման համար») ծրագրի տնօրեն Թոմ Համեթը և ԱՀԿՄԿ հիմնադրամի տնօրեն Վարդան Ուռուտյանը: Ստորագրման արարողությանը ներկա էր ծրագիրը ֆինանսավորող ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան գրասենյակի բնապահպանական հարցերի պատասխանատու Մարինա Վարդանյանը: Հնգամյա գործակցության սկիզբը դնող հուշագրի ստորագրման արարողությանը մասնակցեցին նաև ՀԱԱՀ-ի մի շարք դեկաններ, ֆինանսական և ծրագրային համակարգող Դենիս Հադսոնը և ԻննովԵՅԹԻ Հայաստանյան ծրագրի ղեկավար Անջելա Նիլընը:




Պրոֆ. Մարմարյանը, դոկտ. Համեթը, տկն Վարդանյանը և դոկտ. Ուռուտյանը կարևորեցին հուշագրի ստորագրումը, որի շրջանակում իրականացվելիք գործակցությունը ներառելու է կրթական և գիտահետազոտական բնույթի փոխանակումներ, Հայաստանում և ԱՄՆ-ում կրթության գերազանցության հետագա ապահովում, ակադեմիական տեղեկատվության փոխանակում, համատեղ հետազոտական նախագծերի և գիտաժողովների կազմակերպում, ինչպես նաև ագրոբիզնեսի առանձին ոլորտների ուսումնական պլանների և առարկայական դասընթացների բարեփոխում և նորերի ստեղծում: Մասնավորապես, տիկին Վարդանյանը շեշտադրեց ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի դերն ու միջազգային հեղինակությունը՝ ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից «ԻննովԵՅԹ Հայաստան» ծրագրի ֆինանսավորման վերաբերյալ որոշում ընդունելու գործում, մանավանդ՝ միջազգային կառույցների աջակցության աստիճանական նվազման պայմաններում:

Այս հուշագրով, ըստ էության, գործընկերները ստորագրեցին ԻննովԵՅԹ ծրագրի շրջանակում ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի հզորացման վերաբերյալ իրենց պատրաստակամության տակ: Հզորացումը ենթադրում է կենտրոնում երկրորդ մասնագիտացման ներդրումը:

***Սոս Ավետիսյան***
*ԱՀԿՄԿ հիմնադրամի հանրային կապերի մասնագետ*

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

# ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՏՈՒՂՆԵՐԸ

***Գեղարքունիքի մարզի կաթ արտադրողների «Վահան» սպառողական կոոպերատիվը ստեղծվել է դեռևս 2004թ.-ին՝ 33 հիմնադիր անդամների մասնակցությամբ: «Տարիների փորձը ցույց տվեց, որ սեփականաշնորհումից հետո դժվար էր միայնակ աշխատել: Սկսեցին աստիճանաբար ձևավորվել փոքր ֆերմերային խմբեր, ովքեր համատեղ էին լուծում իրենց խնդիրները»,- ասում է սպառողական կոոպերատիվի նախագահ Իլյիչ Ղուլյանը:***

Կոոպերատիվի մեջ այժմ ընդգրկված անդամների թիվը հասնում է 100-ի: Տնտեսությունների զարգացման համար օգտվում են գյուղատնտեսական փոքր վարկերից, որի միջոցով ավելացնում են կենդանիների գլխաքանակը, ստեղծում կերի կայուն բազա, սերմացու և անհրաժեշտ այլ պարագաներ գնում:

Սկզբնական շրջանում կոոպերատիվի ձևավորմանն աջակցել է ԱՄՆ Գյուղդեպարտամենտը: Վերջինս կոոպերատիվի անդամների համար կազմակերպել է ուսուցումներ՝ անասնապահության վարման մշակույթի, կենդանիների պահվածքի և մասնագիտական այլ հարցերի վերաբերյալ: Վահան գյուղի գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված կաթը տեղափոխվում է կոոպերատիվի հավաքման կետ, ենթարկվում անալիզի, այնուհետև՝ սառեցվում: Որից հետո մթերվում է վերամշակող ընկերությունների կողմից: Կոոպերատիվի հիմնական գործընկերը՝ «Աշտարակ կաթ» ընկերությունն է, որը վճարումը կատարում է՝ ելնելով կաթի յուղայնությունից:

Կոոպերատիվը համագործակցում է «Հեյֆեր-Հայաստան» կազմակերպության հետ, որն աջակցում է արհեստական սերմնավորման աշխատանքների իրականացման գործընթացին: Վահան գյուղում արդեն առկա են նման եղանակով ծնված 50 գլուխ տոհմային հորթեր: «Այդպիսով, կբարելավվի նախրի որակական կազմը, կբարձրանա կենդանիների մթերատվությունը»,- հավելում է Ղուլյանը: Վահան գյուղում առկա են նպաստավոր բոլոր պայմաններն՝ անասնաբուծության զարգացման համար: Գյուղացիները, համատեղ աշխատանքի պտուղները տեսնելով, նախատեսել են գալիք տարում ավելացնել անասնագլխաքանակը:

***Նելլի Սահակյան***

*ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ*

# ՄԻ ԱՄԲՈՂՋ ՕՐ ՉԻՆԱՐԻՈՒՄ




Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանին աշխատանքային գործունեության 6-ամյա կարճ ժամանակընթացքում հասցրել են ճանաչել անգամ սահմանում ապրող դպրոցականները, մանկապարտեզի սաները: Գնահատելով մարզպետի հարգալից վերաբերմունքն իրենց հանդեպ՝ սահմանում ապրող այդ մարդիկ միայն առողջություն և արդյունավետ գործունեություն մաղթեցին բոլոր խնդիրներով մտահոգ մարզպետին:

Հատկապես նրա ջանադիր աշխատանքի արդյունքում սեպտեմբերի 28-ին տեղի ունեցած ուժեղ քամու հետևանքով տուժած բնակիչները ևս օգտվեցին ՀՀ կառավարության որոշմամբ հատկացված 20 մլն դրամից: Իսկ առաջիկայում, հարևան Այգեհովիտ և Դիտավան համայնքների տարածքներում, արտերկրում ապրող իջևանցի բարերարների աջակցությամբ, կկառուցվի խոզաբուծական խոշոր համալիր՝ նախատեսված 50 հազ. գլխաքանակի համար:

Այցելության հաջորդ կանգառը՝ Չինարի համայնքում էր: Սահմանապահ համայնք, որտեղ պարբերաբար այցելում է մարզպետը, լսում և կառավարությանը ներկայացնում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները: Արդյունքում գնդակոծությունից տուժած սահմանամերձ տարածքներին՝ այդ թվում՝ նաև Չինարիին տրվեցին աջակցություններ՝ կառավարության որոշմամբ հատկացված 20 մլն դրամից, Իրականացվող պաշտպանիչ աշխատանքներում ընդգրկվեց նաև Չինարին: Մասնավորապես՝ այդտեղ արդեն ավարտվել են դպրոցի պատուհանների վերատեղադրման և լուսավորության անցկացման աշխատանքները: Կառուցվել է նաև հենապատ, որի արդյունքում որոշակիորեն ապահովագրվել են և գյուղամիջյան ճանապարհով երթևեկողները, և մանկապարտեզի սաները: Այդ նպատակով ՀՀ պետբյուջեից դպրոցի պատուհանների վերատեղադրման համար տրամադրվել է 5 մլն 760 հազ. դրամ, իսկ հենապատի համար՝ 13 մլն 440 հազ. դրամ: Հովիկ Աբովյանին անհամբերությամբ էին սպասում նաև գյուղի կենտրոնում հավաքված գյուղացիները: Նրանք նախ՝ երախտիքի խոսքերով դիմավորեցին մարզպետին, ով հաճախակի այցելելով իրենց՝ ընթացք է տալիս խնդիրներին,ամենակարևորը՝ հույս ու հավատ ներշնչում, որն ամենամեծ զենքն է սահմանում ապրողի համար:

Համայնքի ղեկավարը և բնակչությունը շնորհակալություն հայտնեցին և նշեցին, որ բարձրացված բոլոր հարցերը ստացել են իրենց լուծումները: Միայն խնդրեցին, որ հնարավորության սահմանում գյուղում՝ ի լրումն «Էկոգարդեն» պահածոների գործարանի, ևս հիմնել մեկ այլ արտադրություն, որ կբերի նոր աշխատատեղեր:

Համոզիչ էր 2014 թ.-ին հատկացված 335.0 մլն դրամ գումարի սահմաններում կատարված աշխատանքների շարքը, որից 104.0 մլն դրամն օգտագործվել էր կրթական հաստատությունների վերանորոգման աշխատանքների վրա. վերանորոգվել են 7 համայնքային դպրոց, իսկ 9 դպրոցներում ռազմագիտության դասասենյակներ: Կողբի դպրոցում կառուցվել է նոր մարզադահլիճ:

Ճանապարհաշինության ոլորտին 185.0 մլն դրամ տրամադրվել է, 3.41.0 մլն դրամ՝ Այգեձոր համայնքի ոռոգման ջրատարի կառուցմանը, որից կօգտվի 4 համայնք և արդյունքում՝ ոռոգելի կդառնա 35 հա հողատարածք: Իսկ 4.14.6 մլն դրամը տրամադրվել է նախագծանախահաշվային և հետազոտական աշխատանքներին, կազմվել են գրեթե 30 օբյեկտի նախագիծ և սեյսմիկ հետազոտություն: Ամենակարևոր ոլորտներից դպրոցաշինության համար կառավարության հաստատմամբ հատկացվել է 342 մլն դրամ: Ընդհանուր առմամբ, վերանորոգվել են Ծաղկավան և Կողբ համայնքների դպրոցները: Հանրապետությունում 31 սահմանամերձ համայնքի տրվել են հարկային արտոնություններ, որոնցից 22-ը՝ Տավուշի մարզում:

Տաթևիկ Նազինյան
*Տավուշի ԳԱՄԿ*

*ԿՐԹԱԿԱՆ*

# *ԱՐԴԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ*



Կարեն Լազարյանը ծնվել է Գորիս քաղաքում: Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում ստացել է ֆիզիկական կուլտուրայի դասատուի և ատլետիկայի մարզչի որակավորում: 2003 թ. դասավանդել է ֆիզկուլտուրա առարկան «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում (նախկինում՝ Գորիսի մանկավարժական ուսումնարան): 2009թ. մրցույթով ընտրվել է նույն քոլեջի տնօրեն: 2014թ. ապրիլի 4-ին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով պարգևատրվել է «Գարեգին Նժդեհ» մեդալով:

Քոլեջի ուսումնական գործընթացին ծանոթացրեց Կ. Լազարյանը:

- Պարո՛ն Լազարյան, զրուցենք քոլեջի հիմնադրման և ուսուցանվող մասնագիտություններ մասին:

- Քոլեջը ոչ միայն Գորիսի, այլև տարածաշրջանի հնագույն ուսումնական հաստատություններից է: Հիմնադրվել է 1928 թվականին (որոշ աղբյուրների համաձայն՝ 1923 թվականին) և տևական ժամանակ կոչվում էր Գորիսի մանկավարժական տեխնիկում՝ լուծելով և՛ Սյունիքի ու Վայոց ձորի շրջանների, և՛ Լեռնային Ղարաբաղի դպրոցների մանկավարժական կադրերի պատրաստման խնդիրը: 2008 թվականից կրթօջախը նոր անվանում ունի՝ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ: Դա նշանակում էր մանկավարժական մասնագիտություններից աստիճանական հրաժարում և նոր մասնագիտությունների ներդրում:

Այսօր քոլեջում միջին մասնագիտական կրթության ծրագրով առկա են հետևյալ մասնագիտությունները՝ նախադպրոցական կրթություն, հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում, քույրական գործ, մանկաբարձական գործ, դեղագործություն, զբոսաշրջություն: Ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ նաև, որ Գորիսի տարածաշրջանում զգացվում է արհեստագործական մասնագիտությունների ուսուցման կարիք: Եվ մենք, միջին մասնագիտական կրթական ծրագրերին զուգահեռ, սկսեցինք կազմակերպել նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրերի ուսուցում: Ներկայումս մեզ մոտ ուսուցանվում են նախնական մասնագիտական (արհեստագործական) հետևյալ մասնագիտությունները՝ հասարակական սնունդ, վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում, ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ: Նոր մասնագիտությունների կազմակերպումն այսօր դժվար գործընթաց է, քանզի պայմանավորված է համապատասխան մանկավարժական կադրերի պատրաստմամբ, անհրաժեշտ բազայով, ինչը կարողացել ենք լուծել ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ: Այսօր քոլեջում գործում է ինը մասնագիտություն՝ 393 ուսանողով:

-Ուսանողներն իրենց ուսումնաարտադրական պրակտիկան ո՞ր կազմակերպություններում են անցկացնում:

- Իսկապես, առանց արդյունավետ պրակտիկայի դժվար է պատկերացնել ուսումնական պրոցեսի ամբողջությունն ու լիարժեքությունը: Եվ, այդ առումով, կարող եմ ասել, մենք լավ գործընկերներ ունենք: Սակայն ուզում եմ դրվատանքի խոսք ասել առանձնապես «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության մասին, որտեղ ավանդաբար կազմակերպվում է քոլեջի բժշկական մասնագիտությունների գծով պրակտիկան:

- Ուսումնական հաստատությունների հետ համագործակցո՞ւմ եք:

- Կրթության և գիտության նախարարությունը տարիներ շարունակ որդեգրել է խրախուսելի մի գործելակերպ, ըստ որի՝ հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև համագործակցությունը դարձել է անշրջանցելի իրողություն: Եվ դա հաճելի է ու օգտակար, նաև հնարավորություն է տալիս իմանալ, թե որ քոլեջում դրական ինչ միտումներ կան:

Առանձնահատուկ կապեր ունենք Շուշիի հումանիտար քոլեջի հետ: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ, կարողանում ենք իրազեկ լինել բնագավառի զարգացման միտումներին:

Ուսումնանյութական բազայի շարունակական բարելավման խնդիր ունենք, որը սեփական միջոցներով անհնար է լուծել, ինչը նշանակում է գտնել դոնոր կազմակերպություններ, հովանավորներ:

Քոլեջի համար լուծում պահանջող ի՞նչ խնդիրներ կան:

- Շենքի ջեռուցման խնդիրն է, ի դեպ, նախագծանախահաշվային փաստաթղթերն արդեն պատրաստ են:

Մեզ մտահոգում են շենքի պահպանման խնդիրը, շենքի բակի կարգավորումը, ջրահեռացման կանոնավորումը:

- Որևէ կազմակերպություն օգնում է քոլեջին:

- Քոլեջին ցույց տրվող յուրաքանչյուր աջակցություն մենք համարում ենք օգնություն նախևառաջ ուսումնական գործընթացին:

Այդ տեսակետից, առաջինը՝ Սյունիքի մարզպետարանն է: Վերջին տարիներին մարզպետարանը երկու ծրագիր է իրականացրել քոլեջում՝ մոտ 13 մլն դրամ արժողությամբ, որի արդյունքում շենքի ներսը մասամբ կարգի է բերվել:

Որոշակի աջակցություն ենք ստացել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունից, Գորիսի քաղաքապետարանից, «Որոտանի հէկերի համակարգ» ՓԲ ընկերությունից, ԱՄՆ խաղաղության կորպուսից, գործարարներից: Ընդհանուր ներդրումները վերջին հինգ տարում կազմել է մոտ 20 մլն դրամ:

- Ի՞նչ կցանկանայիք ավելացնել ասվածին:

-Ողջունելի և բնական կարելի է համարել, որ «Ագրոլրատու» թերթն անդրադառնում է մարզերում գործող ուսումնական հաստատությունների գործընթացին: Չէ՞ որ մեր կրթօջախը (միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն առհասարակ) ինչ-որ չափով նաև գյուղապահպանության հարց է լուծում: Գորիսի տարածաշրջանում, օրինակ, չգիտեմ մի գյուղ, որտեղ մեր շրջանավարտներն ակտիվ դերակատարություն չունենան համայնքային կյանքում:

Մեր զրույցը տեղի է ունենում Ամանորի և Սուրբ Ծննդյան օրերին, ուստի շնորհավորում եմ բոլորի Նոր Տարին և Սուրբ Ծնունդը:

Թո՛ղ 2015-ը խաղաղության, պետական կայուն ընթացքի, զարգացման տարի լինի մեր հանրապետության համար: Թո՛ղ գալիք տարին երջանկություն և հաջողություն բերի ամեն մի հայ ընտանիքի:

Մանվել Կիրակոսյան

## ԱՄՓՈՓՈՒՄ ԵՆՔ ՏԱՐԻՆ

# ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ 10 ՏԱՐԻՆԵՐ

2014-ը խորհրդանշական էր Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» ՀԿ-ի համար հատկապես նրանով, որ լրացավ կազմակերպության տասնամյակը: Այս 10 տարիների ընթացքում «Կանաչ արահետ»-ը Հայաստանի բոլոր մարզերում՝ իրականացրել է մի շարք ծրագրեր՝ ուղղված օրգանական և առանց թունանյութերի գյուղատնտեսության զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, գյուղական համայնքների կայուն զարգացմանը: Այս հոբելյանական տարում, «Կանաչ արահետը» առաջին անգամ Երևանում կազմակերպեց Գյուղական կյանքի և ավանդույթների փառատոնը, որը կայացավ հոկտեմբերի 11-ին՝ Անգլիական այգում: Փառատոնին մասնակցեցին ֆերմերային խմբեր, գյուղատնտեսության ոլորտի գործարարներ և կանանց խմբեր՝ Հայաստանի բոլոր մարզերից, ինչպես նաև՝ Վրաստանից: Ցուցահանդես-վաճառքին ներկայացվեց գյուղատնտեսական արտադրանքի բազմազանություն. ավանդական և ոչ-ավանդական բանջարեղեններ, թարմ և չորացրած բույսեր, համեղ մրգեր և հատապտուղներ, վերամշակված գյուղատնտեսական մթերքներ, ձեռագործ աշխատանքներ: Փառատոնին ներկա էին ՀՀ Գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանը, Երևանի փոխքաղաքապետ Դ. Օհանյանը և Հայաստանում Եվրամիության պատվիրակության միջազգային համագործակցության պատասխանատու Ջ. Բարքերը: Նրանք նշեցին միջոցառման կարևորության և փառատոնն ամենամյա դարձնելու անհրաժեշտության մասին: Հարկ է նշել, որ փառատոնի նախորդ օրը, հոկտեմբերի 10-ին, «Կանաչ արահետ»-ը կազմակերպել էր «Կայուն գյուղատնտեսությունը՝կանաչ ապագայի երաշխիք» համաժողովը, որը տեղական և միջազգային մի շարք կազմակերպությունների հնարավորություն տվեց ներկայացնել կայուն գյուղատնտեսության ոլորտում ունեցած լավագույն փորձը և հաջողության պատմությունները:

2014 թվականը, ծրագրային առումով, նույնպես հագեցած էր: Ամփոփվեցին մի շարք ծրագրեր, որոնցից էին Եվրամիության կողմից ֆինանսավորվող և «Ակցիա սովի դեմ միջազգային հիմնադրամի հետ համատեղ իրականացվող՝«Աջակցություն ՀՀ Արագածոտնի մարզի գյուղական համայնքերի զարգացմանը», և Նորվեգիայի դեսպանության կողմից ֆինանսավորվող՝ «Տավուշի մարզի Բերդի ենթաշրջանի բնապահպանական կրթության նախաձեռնություն» ծրագրերը: Առաջին ծրագրի շրջանակներում, Ապարանի տարածաշրջանում հիմնվեցին լարասյունային համակարգով ազնվամորու 35 տնկարկներ՝ օրգանական մշակությամբ, ինչպես նաև ստեղծվեցին կանանց ֆերմերային խմբեր: Երկրորդ ծրագիրը օգնեց Տավուշի մարզի սահմանամերձ յոթ գյուղերի աշակերտների համար կազմակերպել տեսական և գործնական ուսուցումներ՝ բնապահպանության և թափոնների կառավարման թեմաներով:

Այս տարի շարունակվեց Ավստրիական զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող՝ «Հարավային Կովկասում գյուղական համայնքների կանանց կարողությունների զարգացումը կայուն գյուղատնտեսության ապահովման համար» տարածաշրջանային ծրագիրը, որն իրականացվեց Կովկասի բնապահպանական ՀԿ-ների ցանցի և «Հիլֆսվերք Ավստրիա ինթերնեշնլ» կազմակերպության հետ համատեղ: Ծրագրի ձեռքբերումներից են Շիրակի Արեգնադեմ համայնքում գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվի հիմնումը և Գյուղական կանանց խորհուրդների ստեղծումը՝ Արեգնադեմ, Ողջի և Բյուրակն համայնքներում:

«Կանաչ արահետ»-ը 2014-ին իրականացրել է մի շարք այլ նախաձեռնություններ, այդ թվում՝ բարեգործական, որոնք նպաստել են աջակցության կարիք ունեցող մի քանի ընտանիքների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:



Կազմակերպությունը նաև պարբերաբար հրատարակում է ուսուցողական ձեռնարկներ, գրքեր, կրթական և տեղեկատվական նյութեր՝ կայուն գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության թեմաներով:

Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» ՀԿ-ն հաջորդ տարիներին էլ կշարունակի իր առաքելությունը՝ նույն նշանաբանով՝«Ֆերմերի հետ կողք-կողքի»:

**Նունե Սարուխանյան**
*«Կանաչ արահետ» ՀԿ նախագահ*

# ԿԱՐԵՎՈՐ ԵՎ ԳՆԱՀԱՏԵԼԻ ԳՈՐԾ



Հեյֆեր Հայաստանի համար այս տարին նույնպես Հայաստանի գյուղաբնակ ընտանիքների համար փոփոխությունների տարի էր: Այդ փոփոխությունները հնարավոր դարձան՝ արդար և կայուն զարգացման հիմքում ընկած Հեյֆեր Հայաստանի 12 անկյունաքարերի մեթոդաբանության, ինչպես նաև՝ համայնքի ռազմավարական զարգացման մոդելի կիրառման շնորհիվ:

2014թ. ընթացքում մենք ամրապնդեցինք համագործակցությունն ինստիտուցիոնալ գործընկերների հետ՝ Եվրոպական Միության և ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորման միջոցով, փոփոխություն բերեցինք գյուղաբնակ ընտանիքների և երիտասարդների կյանքում:

Մեր համագործակցությունը տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների հետ, ինչպես նաև գործընկերությունն ինստիտուցիոնալ և հանրային ու մասնավոր սեկտորների հետ, միտված էր Հայաստանի գյուղաբնակ համայնքներում զարգացնելու սոցիալական կապիտալը և բերելու այն փոփոխությունը, որն ապահովում է շոշափելի արդյունք:

Մեր ծրագրերում շարունակեցինք զարգացնել արժեքային շղթաների բաղադրիչը՝ ստեղծելով տնտեսապես կենսունակ ու կայուն կապեր արժեքային շղթայի տարբեր դերակատարների միջև, ինչպիսիք են՝ ֆերմերները, կոոպերատիվները, վերամշակողները, իրացման ենթակառուցվածքներն ու վերջնական գնորդը:

2014 ֆինանսական տարվա ընթացքում, 3929 ընտանիքներ Հեյֆեր Հայաստանից ստացել են գյուղատնտեսական տարբեր ներդրումներ (կենդանիներ, սերմեր և այլն), 606 անհատներ ուսուցում են ստացել Հեյֆերի 12 անկյունաքարերի, ծրագրի ինքնագնահատման և պլանավորման, արժեքների վրա հիմնված՝ պլանավորման և կառավարման, ինչպես նաև՝ անասնաբուժության, մարքեթինգի, կենդանիների գենետիկական հատկանիշների բարելավման, կոոպերատիվների զարգացման վերաբերյալ: Բացի այդ, ԱՅՕ մանկապատանեկան ակումբների շուրջ 2000 երիտասարդներ ստացել են արտադասարանային ուսուցում և զարգացրել առաջնորդության հմտություններ, շուրջ 2300 երիտասարդներ ուսուցում են ստացել համընդհանուր արժեքների և բանավեճի արվեստի վերաբերյալ, զարգացրել են հաղորդակցության և կապերի հաստատման հմտություններ: Ներդրումներն ու ուսուցումներն օգնել են ֆերմերներին՝ բարելավել իրենց արտադրությունը, շուկայում ապահովել ապրանքների մրցունակությունն ու ավելացնել եկամուտը:

Հեյֆեր Հայաստանը և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հաջողությամբ համագործակցում են ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի և Հեյֆեր Ինթերնեյշնլի կողմից ֆինանսավորվող՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն» (ՀԳՌԿՄ) ծրագրի շրջանականերում: Մինչ օրս ծրագրում ընդգրկված համայնքային կոոպերատիվներին Հեյֆերն աջակցել է շուրջ 609 մլն դրամի չափով՝ կոոպերատիվներին տրամադրելով գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ:

2014 ֆինանսական տարում Հեյֆեր Հայաստանը Եվրոպական Միությունից ստացավ ֆինանսավորում «Երիտասարդները՝ հանուն տարածաշրջանում փոխադարձ կապի պահպանման և համագործակցության» և «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագրերի համար: Դրանք տարածաշրջանային բազմաբաղադրիչ ծրագրեր են, որոնցում ընդգրկված են 4 երկրներ՝ Հայաստանը, Վրաստանը, Թուրքիան և Բուլղարիան:

Ընթացիկ տարում Հեյֆեր Հայաստանը և Հայաստանի Ֆուլլեր տնաշինական կենտրոնը սկսեցին համագործակցել ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» (ԱՐԴԻ) ծրագրի շրջանակներում: Այն բազմաբաղադրիչ ծրագիր է, որում ներգրավված են Հայաստանի 3 մարզեր՝ Վայոց ձորը, Լոռին և Սյունիքը:

Մենք մեծ նվիրվածությամբ ենք կատարում մեր առաքելությունը՝ ուղղված Հայաստանի գյուղական համայնքների բարօրությանն ու հայ գյուղի զարգացմանը: Ինչպես նախորդ տարիներին, 2014 թ. ևս ջանասիրաբար իրականացրեցինք այն բոլոր աշխատանքները, որոնք նախաձեռնել էինք: Հավատում ենք գալիք տարվա հաջողություններին ու վստահ ենք, որ մեր քրտնաջան աշխատանքով կկարողանանք բարեկեցություն բերել հայ գյուղացու ընտանիքում՝ փորձելով փոքրիշատե թեթևացնել գյուղացու հոգսը և օգնել հաղթահարել առկա դժվարությունները:

Թող գալիք 2015թ. լինի բեղմնավոր տարի, բերքի, առատության, հաջողությունների ու նորանոր ձեռքբերումների տարի:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

**Անահիտ Ղազանչյան**
*Հեյֆեր Հայաստանի տնօրեն*

# Ինչ է խոստանում փայտե Այծը . . .



*Մի շաբաթից հրաժեշտ կտանք 2014 թվականին ու կդիմավորենք 2015-ը: Գալիք տարին, ըստ չինական հորոսկոպի, Այծի տարի է: Ինչ է խոստանում Այծը կենդանակերպի նշանների համար, ինչպե՞ս է պետք դիմավորել Այծի տարին, ի՞նչ գույներով զարդարել բնակարանն ու ի՞նչ դնել տոնական սեղանին: Այս հարցերի պատասխանները կփորձենք ներկայացնել ստորև:*

*Ըստ աստղագետների՝ Այծի տարվա գույներն են՝ կապույտը և կանաչը, ուստի հենց այս գույները պետք է գերակշռեն թե՛ տան ու սեղանի ամանորյա զարդարանքի, թե՛ տոնական հագուստի մեջ: Այս տարի Ամանորի սեղանը պետք է լի լինի բանջարեղենով, մրգերով և կաթնամթերքով: Մսամթերքն այդքան էլ չի խրախուսվում: Ասում են՝ Այծի տարվա խորհրդանիշերից է փայտը: Ուստի տոնական դիզայնի մեջ կարող եք նաև փայտյա զարդարանքներ ներառել: Այծը բարի, օգտակար, հոգատար, մեծահոգի, միաժամանակ պաշտպանության կարիք ունեցող կենդանի է: Նրա այս հատկությունները կարելի է վերագրել նաև գալիք տարվան: Ըստ արևելյան օրացույցի՝ Այծի տարին սկսվում է 2015 թվականի փետրվարի 19-ին և ավարտվելու է 2016 թվականի փետրվարի 7-ին: Շատ կանայք այս տարի մայր կդառնան, քանի որ տարվա խորհրդանիշներից մեկը՝ մայրությունն է: Այծի տարվա տարերքը ծառն է՝ գարնան, սիրո, առավոտի խորհրդանիշը: Ծառը նաև կյանքի ու իմաստնության աղբյուրն է: Այծը չինական օրացույցում 8-րդ տարրն է, ինչը հիմք է տալիս մտածելու, որ 8-ը հանդիսանում է նաև երջանիկ թիվ նաև չինական համոզմունքների տեսակետից: Այդ թիվը համարվում է բարեկեցության և խաղաղության թիվ:*

## ԱՌՆԵՏ



Առնետների համար 2015թ.-ը կլինի բացահայտումների և նորամուծությունների տարի: Այն կթարմացնի ձեր կյանքը: Կյանքի նկատմամբ ձեր հայացքներն ու ըմբռնումներն այս տարի կփոխվեն: 2015թ.-ին հորոսկոպը վճռականորեն ձեզ խորհուրդ է տալիս չչարաշահել ձեր առողջությունը և ուշադրություն դարձնել ցավային ախտանշաններին: Փոխհարաբերություններում առնետները պետք է սովորեն ուրախանալ և վայելել: Տարին առնետների համար կանխատեսում է հանգստի և ճամփորդության հնարավորություններ, այնպես որ՝ պրամադրվեք գործնական ուղևորությունների և գործուղումների:

## ՑՈՒԼ



Գալիք տարին ցլերի համար կանխատեսում է ժամանակահատված՝ լի սիրային թեմաներով, կարիերայով և ֆինանսական ոլորտով: Ձեր համառությունը և հաստատակամությունը, գործը մինչև վերջ տանելու ունակությունն այս տարի կաշխատեն ձեր օգտին: Ընտանեկան հարաբերություններում կանաչ փայտե այծի տարում ցլերը կզբաղեցնեն ընտանեկան խնդիրները և վեճերը հարթեցնող միջնորդի դեր: Ցլերին այս տարի կանխագուշակում է ճամփորդություններ՝ կապված ինչպես հանգստի, այնպես էլ աշխատանքի հետ:

## ՎԱԳՐ



Այծի տարին վագրերի համար խոստանում է լինել բարդ, բայց, ընդհանուր առմամբ, բարեհաջող: Հորոսկոպը վագրերին խորհուրդ է տալիս լինել առավելագույնս դիվանագետ, որպեսզի կարողանան հաղթահարել խոչընդոտներն ու թակարդները: Առողջությունը չպետք է անհանգստացնի վագրերին, հորոսկոպը խոստանում է այս ոլորտում ամբողջական բարեկեցություն: Վագրերին սպասվում են բազմաթիվ հասարակական միջոցառումներ և երեկույթներ, ուր կայցելեն իրենց ընտանիքի անդամների ուղեկցությամբ:

## ՃԱԳԱՐ (ԿԱՏՈՒ)



2015թ.-ը ճագարների համար կլինի խաղաղության և հանգստության տարի: Իրենց նրբանկատության և դիվանագիտության շնորհիվ ճագարները կկարողանան խուսափել անցանկալի իրավիճակներից՝ թե՛ ընտանիքում, թե՛ աշխատանքում: Այս տարի ճագարների համար նշված կլինի սեփական հոգեկան զարթոնքով, սեփական հոգին և ներքին պահանջմունքները հասկանալու հետաքրքրությամբ: Աշխատանքում սպասվում են հաջողություններ: Ընտանեկան կյանքը նույնպես կլինի հանգիստ և խաղաղ: Ճամփորդություններ և ուղևորություն հորոսկոպը չի խոստանում:

## ՎԻՇԱՊ



2015թ.-ին վիշապներին սպասվում է բազմաթիվ գործեր և լարված աշխատանքային ռիթմ: Վիշապների առողջությանը հորոսկոպը խնդիրներ չի խոստանում, սակայն անհրաժեշտ է որոշակի ուշադրություն դարձնել ֆիզիկական ծանրաբեռնվածությանը և կատարել գոնե փոքր վարժություններ: Աշխատանքային գրաֆիկի ճշտումը շատ ժամանակ կխլի, ինչի հետևանքով էլ ընտանիքում կառաջանան դժգոհություններ:

## ՕՁ



Չինական հորոսկոպը օձերի համար 2015թ.-ը կանխատեսում է որպես բարեհաջող տարի: Օգտագործեք ձեր ուղեղը, որպեսզի առավելագույնս օգտագործեք ձեր հնարավորությունները՝ անձնական և պրոֆեսիոնալ ոլորտում: Կարիերայում ձեզ հաջողությունը կապահովվեն աշխատասիրությունն ու բարձր աշխատունակությունը: Ձեր առողջությանը սպառնում են միայն փիաճություններ՝ կապված ձեր հոգեկան վիճակի հետ: Մի ճնշեք ձեր զգացմունքներն ու էմոցիաները: Ձեզ կուղեկցեն ընտանիքի սերն ու աջակցությունը: Օձերին սպասվում են կարճ ճամփորդություններ դեպի հարազատ վայրեր:

## ՁԻ



Ձիերին խորհուրդ է տրվում այս տարի դառնալ մի փոքր եսասեր: Դուք պետք է այդ ժամանակահատվածը օգտագործեք սեփական տաղանդը բացահայտելու համար, ինչպես նաև կատարեք որոշակի խնայողություններ: Սեփական թուլությունների հաղթահարումը կտանի դեպի հաջողություն տանող բանալին: Աշխատանքում ձեզ սպասվում է հաջողություն, դուք հեշտությամբ գլուխ կհանեք բարդ աշխատանքներից, սակայն փողերը դեպի ձեզ կգան շատ ջանքերի արդյունքում: Առողջությունը գերազանց է, սակայն արժե ժամանակ հատկացնել սպորտին: Տարին բարեհաջող է արտասահման ճամփորդության և այլ մշակույթներին ծանոթանալու համար:

## ԱՅԾ (ՈՉԽԱՐ)



Այս տարին ձեր տարին է: Բիզնեսը, սերը, առողջությունը կլինեն բարեհաջող, սակայն մանրամասնորեն հաշվի առեք բոլոր հնարավորությունները: Ձեր լավատեսությունը, քաջությունը և խանդավառությունը կլինեն վարակիչ շրջապատի համար: Այծի տարում ծնվածներին սպասվում է արագընթաց հաջողություն և աշխատանքում, և ցանկացած բիզնես նախագծում, ինչպես նաև գերազանց ֆիզիկական և հոգեկան առողջ վիճակ: Ձեզ սպասվում են գործնական ճամփորդություններ, ընտանիքի հետ արձակուրդ և գերազանց հանգստյան օրեր:

## ԿԱՊԻԿ



Եղեք բավարար լուրջ, եթե ցանկանում եք ստանալ հնարավորինս առավելագույնը: Աշխատանքում հաջողություն կապահովեն ձեր հարմարվելու և հարմարեցնելու ունակությունները, այնպես որ՝ մի ցուցաբերեք համառություն և փոխեք ձեր հայացքները աշխատանքի վերաբերյալ: Առողջությանը սպառնում են սթրեսները: Շահավետ կլինեն աշխատանքային ճամփորդությունները:

## ԱՔԼՈՐ



2015թ.-ի հորոսկոպը աքլորին կանխատեսում է, որ նա կկարողանա հասնել բարձունքների, եթե սովորի գոնե մի փոքր հարմարվել իր շրջապատին: Ավելի շատ դիվանագիտություն՝ ահա այս որակը կաշխատի ձեզ համար: Ձեր ճարտասանական հմտություններն և տրամաբանությունը կօգնեն ձեզ կնքել նոր գործարքներ և վեր բարձրանալ: Սպասվում են աշխատանքային գործուղումներ: Առողջության հորոսկոպը խորհուրդ է տալիս ուշադրություն դարձնել պրոֆիլակտիկ բուժմանը: Ընտանեկան հարաբերություններում ամեն ինչ կլինի բարեհաջող:

## ՇՈՒՆ



Հավատարմությունը, գիտելիքների պաշարը և սերը, որոնց տիրապետում են այս տարում ծնվածները, կօգնեն նրանց նշանակալի առաջընթաց ունենալ: Եվ բիզնեսում և սիրո մեջ տարին կանխատեսում է հաջողություն: Բարեգործություն և մարդասիրություն՝ ահա այն, ինչով արժե, որ զբաղվեն շները կանաչ փայտե այծի տարում:

Եթե դուք բավարար ճկուն եք, ապա ոչինչ չի խոչընդոտի ձեզ հասնել այն առաջնորդի դիրքին, որը ձեզ սպասվում է կարիերայում:

## ԽՈԶ (ՎԱՐԱԶ)



Վարազներն այծերի տարում կլինեն կյանքով բավարարված և շատ կշփվեն: Նրանց դրական բնույթը կօգնի իրենց հասնել բոլոր նպատակներին: Հաջողությունը վարազներին սպասվում է և բիզնեսում և կարիերայում, որի գրավականը կլինեն աշխատասիրությունն ու համբերությունը: Վարազները նվիրված կլինեն ընտանիքին և կվայելեն լավ ժամանցը իրենց ընտանիքի հետ: Ուժերը վերականգնելու համար խորհուրդ է տրվում կատարել կարճ ուղևորություններ:

### Ո՞րտեղ դիմավորել Այծի տարին

Առաջին հարցն է երևի, որ տանջում է բոլորին: Չէ՞որ հենց տեղի ընտրությունից է կախված տոնի մնացած առանձնահատկությունները: Այստեղ պետք է մի փոքր հիասթափեցնենք նրանց, ովքեր հստակ պատասխանի են սպասում, այդպիսին չկա: Եվ դա կապված է հենց տարվա տիրուհու հետ: Մի կողմից՝ Այծը տնային հանգիստ կենդանի է, որը շատ զգույշ է և չի սիրում կտրուկ փոփոխություններ, այնպես որ՝ բնական կլինի Նոր Տարին դիմավորել տան՝ հարազատների և մտերիմների ընկերակցությամբ:

### Ո՞րտեղ անցկացնել Նոր Տարին

Կարելի է հյուր գնալ կամ տոնն անցկացնել գիշերային ակումբում: Միայն թե Այծը դժգոհ չլինի: Բայց հիշեք, պետք է տոնել խաղաղ պայմաններում և միայն ցամաքի վրա. այծը տանել չի կարողանում օդն ու ջուրը: Աշխատեք խուսափել շատ աղմկոտ վայրերից: Այծը չի սիրում վտանգն ու ռիսկը, այնպես որ՝ չարժե նրան վախեցնել, որպեսզի հաջողությունը չփախչի:

### 2015-ի Նոր Տարվան նախապատրաստվելը

Նախապատրաստում ենք տունը տոնին, որը սկսում ենք տան զարդարումով: Հիմնական գույներն են՝ կապույտը և կանաչը: Այծը սիրում է հարմարավետություն: Ուրեմն՝ լավ կլինի հիմնական գույներին ավելացնել նուրբ և մեղմ երանգներ: Իսկ հետո արդեն ամեն ինչ կախված է ցանկությունից և հնարավորությունից:

Կարելի է ամբողջությամբ փոխել սենյակի ինտերյերը, բայց կարելի է բավարարվել միայն կապույտ գույնի ինչ-որ տարրերի ավելացումով: Դա կարող են լինել դեկորատիվ անձեռոցիկներ, սկահակներ, բարձեր, վառ կապույտ փուչիկներ և այլն: Ամեն ինչ կախված է ձեր երևակայությունից: Այս տարվա պարտադիր տարր է հանդիսանում զանգակը, որպեսզի հասկանաք ինչու, բավական է հիշեք ցանկացած մանկական հեքիաթ, որտեղ պատկերված է այծիկ: Զանգակը կախում են դռանը կամ տոնածառին: Նաև ընդունելի են տարբեր փայտե զարդարանքներ՝ այծիկների կերպարներ, արձանիկներ: Կարելի է կիրառել նաև փաթիլներ և փայլեր: Գերադասելի են կապույտ, երկնագույն և կանաչ զարդարանքները, որոնք անձնավորում են երկինքն ու խոտերը: Կարելի է սենյակը զարդարել նաև սենյակային բույսերով, այն անպայման դուր կգա տարվա տիրուհուն:

### Ինչ հագնել Նոր Տարուն

Հաջորդ հարցն է «Ի՞նչ հագնել»: Խիստ պահանջներ այստեղ չկան: Ինչ հագուստ էլ ընտրեք՝ լինի դա երեկոյան զգեստ, թե սովորական տնային հագուստ, կարևորը՝ հարմարավետությունն է:

Գունային առումով՝ նույնպես բազմազան է, ճիշտ է, առաջնահերթը՝ կանաչ և կապույտ երանգներն են, բայց կարելի է նաև Այծին բնորոշ գույները՝ սպիտակը և սևը: Այս Նոր Տարուն մոռացեք մորթիների և ժանյակների մասին, եթե չեք ցանկանում զայրացնել տարվա տիրուհուն: Եվ հագուստներն էլ պետք է լինեն բնական հումքից:

### Ինչպե՞ս տոնել Նոր Տարին

Այծը չի սիրում ձանձրույթ, այնպես որ՝ տոնը անցկացրեք ուրախ և յուրահատուկ ձևով: Ավելի շատ ծիծաղ և ուրախություն. բանաստեղծություններ, երգեր,

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՄԱՆՈՐՅԱ ՍԵՂԱՆ

***Նավասարդը հայ ժողովրդի ամենասիրված տոներից մեկն է: Տարբեր ժամանակներում հայ ընտանիքները տաբեր կերպ են տոնել այս տոնը, սակայն միշտ էլ սեղանները լի են եղել բազմազան ուտեստներով, իսկ նորի ու լուսավորի սպասումները չեն փոխվել: Ամանորի շեմին միշտ էլ հայոց մոտ ընդունված է եղել մեծ պատրաստություն տեսնել տոնը դիմավորելու համար: Մառանները լցված էին լինում անուշեղենով, ուտեստներով: Տանտիկիններն ուրախությամբ բաժանում էին անուշեղենը և զվարճացնում երեխաներին: Մինչ օրս մեր ժողովրդի կենցաղում այս սովորույթը չի փոխվել:***

Այսօր էլ կարելի է տեսնել, թե ինչպես հարևանները շրջում են մեկը մյուսին շնորհավորելու՝ անուշեղենն ու իրենց պատրաստած համեղ ուտելիքները բաժանելով: Տոնի գլխավոր բաղադիչներից մեկն էլ՝ ուտեստներ պատրաստելն էր: Արդեն աշնան սկզբից մարդիկ պահում էին զանազան մրգերի չրեր՝ սալորի, ծիրանի, դեղձի, ինչպես նաև թարմ միրգ՝ տանձ, խնձոր, սերկևիլ, նուռ, խաղող: Պատրաստում էին ընկույզ-երշիկներ, որոնք մենք հիմա կոչում ենք սուջուխ: Քանի որ հունվարի 1-ը Սուրբ Ծննդյան տոնի շաբաթի մեջ է, ուստի պահոց օր է: Այդ իսկ պատճառով, Ամանորյա տոներին պատրաստում էին այնպիսի ուտելիքներ, որոնք թույլատրվում էին պահոց օրերին: Տանտիկինները մաքրում էին լոբին, սիսեռը, ոսպը, բրինձը, ձավարեղենը, ոլոռը և պատրաստում պասուց տոլմա: Թխում էին տոնական գաթա, անուշեղեն: Եվ երբեք Նոր Տարվա սեղանին չէին դնում ուտելիքներ, որոնք հարիր չէին պահոց օրերին:

Օգոստոսի վերջին, երբ բերքը հավաքել են, այդ առատ բերքի պտուղները բոլորը միասին՝ թե՛ արքունիքը, թե՛ շինական դասը, բոլորը հավասար տոնել են: Քրիստոնեությունն ընդունելուց հետո, եկեղեցին որոշեց, որ մեր Նոր Տարին հունվարի 1-ն է: Այդ ժամանակ էլ ի՞նչ բերք պիտի ցույց տային: Բայց հայերը նորից միջոցը գտան: Պաշարած ընդեղեններից, չրերից սկսեցին շատ կերակրատեսակներ են պատրաստել: Մեր օրերում նույնպես շատ բան է փոխվել: Այսօր ժողովուրդն այնքան էլ չի կարևորում այն հանգամանքը, որ հունվարի 1-ը Սուրբ Ծննդյան տոնի պահոց շաբաթի մեջ է: Ամանորյա սեղաններին կարելի է տեսնել թե՛ միս, թե՛ մրգեր և թե՛ աղանդերներ:

Ամանորյա հայկական ուտեստները շատ են տարբերվում ավանդական հայկական տոնական ու ծիսական ուտեստներից: Ըստ խոհարարների՝ հայկական ավանդական ուտեստներից ամանորյա սեղաններին նախևառաջ պետք է դրված լինի հրաշահամ տոլման: Ավանդական տոլման պետք է պատրաստել այնպես, ինչպես պատրաստել են 5-րդ դարից սկսած, այսինքն՝ երբ ոչ մի մսատեսակ մսաղաց չմտնի, կտրտված կամ էլ ծեծած մսով պատրաստված լինի: Հարկ է նաև բրնձի փոխարեն օգտագործել խոշորահատ բլղուր:

***Ներկայացնում ենք մի քանի բաղադրատոմսեր, որոնք կզարդարեն ձեր տոնական սեղանը***

**Ինչպես պատրաստել գաթա**

Ձուն հարել շաքարավազի հետ, ավելացնել փափկացրած մարգարինը և լավ հարել, որից հետո ավելացնել ձեթը, մածունը՝ սոդայի հետ, քացախը և ալյուրը: Լավ հունցելուց հետո բաժանել 4 գնդի: Խորիզի համար՝ յուղը հարել շաքարավազի հետ, ավելացնել ալյուրը և վանիլինը:

**<u>Բաղադրիչներ՝</u>** ձու՝ 4 հատ, շաքարավազ՝ 1.5 թեյի բաժակ, մարգարին՝ 250 գրամ, ձեթ՝ 1 սուրճի բաժակ, մածուն՝ 0.5 լիտր, քացախ՝ 1 ճաշի գդալ, սոդա՝ 1 թեյի գդալ, ալյուր, միջուկը. յուղ՝ 4 ճաշի գդալ, շաքարավազ՝ 1 թեյի բաժակ, ալյուր՝ 1 թեյի բաժակ, վանիլ:



**Հավով հազանի**

Հավը նախօրոք խաշել: Այդ ընթացքում պատրաստել սոուսը: Կարագը դնել տապակի մեջ և բովել չամիչը: Երբ չամիչն ուռչում է, լցնել բոված ալյուրը: Չամիչն ու ալյուրը մի քիչ խառնելուց հետո ավելացնել հոնի պաստեղը: Այնուհետև ավելացնել հավի արգանակը: Պատրաստել թթվասերի թանձրության սոուս, ավելացնել՝ ծեծած սխտորը, ընկույզն ու աղը միասին: Այդ ծեծած զանգվածը բացել քացախով կամ գինիով, ապա ավելացնել սոուսին: Լցնել կտրատած կանաչիների կեսը: Արդեն եփած հավը դնել սոուսի մեջ, արգանակը քամել ու նորից ավելացնել սոուսին: Վերջում՝ մոտ 15 րոպե, սոուսի մեջ հավը մեղմ կրակի վրա մարմանդ եփել: Մատուցելիս վրան լցնել մնացած թարմ կանաչին:

**<u>Բաղադրիչներ՝</u>** հավ՝ 0,5 կիլոգրամ, հոնի պաստեղ՝ 50 գրամ, չամիչ՝ 50 գրամ, ընկույզ՝ 20 գրամ, սխտոր՝ 10 գրամ, բոված ալյուր՝ 50 գրամ, սպիտակ գինի կամ քացախ՝ 50 գրամ, կանաչի (համեմ կամ սամիթ)՝ 20 գրամ, կարագ՝ 20 գրամ, աղն ու պղպեղը՝ ըստ ճաշակի:

**Ինչպես պատրաստել ամանորյա ձկան բնիկներ**

Սոխը, ձուկն ու կանաչին մանր կտրատել: Պանիրն անցկացնել մանր քերիչով: Խառնել ձուկը, սոխը, կանաչին, աղ, պղպեղ անել: Բատոնը բաժանել 2 սմ հաստությամբ կտորների, ապա հացի վրա լցնել կաթը, մի քիչ քամել: Կաղապարը բուսական յուղով պատել, շարել հացի կտորները: Յուրաքանչյուր կտորի վրա կտրվածք անել: Խորը կտրվածքի մեջ ձուկ ու սոխ դնել, մայոնեզ քսել, դնել ջեռոցը: Եփել 40-45 րոպե՝ 180 աստիճան ջերմաստիճանում: Հետո պանիր ցանել, դնել ջեռոցում ևս 5-7 րոպե:

**<u>Բաղադրիչներ</u>**

ձուկ՝ 500 գրամ, հաց բատոն՝ 400 գրամ, սոխ՝ 200 գրամ, կաթ՝ 500 մլ, պանիր՝ 150 գրամ, մայոնեզ՝ 150 գրամ կանաչի, աղ, սև պղպեղ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Ագրոլրատու»թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի
«Ագրոլրատու» թերթ
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ
«Ագրոգիտություն» ամսագիր
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ
Բաժանորդագրությունն իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ափրաշե» կազմակերպությունները:
ՍԿՍՎԵԼ Է 2015 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 142
ստորագրված է տպագրության 25.12.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում, Երևան, Մամիկոնյանց 39ա